

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԺԱՍԸ
14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին`

Ա. Մովսիսյան	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Վ. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Ա. Պետրոսյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ս. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ
Մ. Մելքումյան	ՀՀ-ում սեյսմամեկուսացման համակարգերի ներդրման հեղինակ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ա. Տեր-Մարտիրոսյան	Փորձագետ
Կ. Կարապետյան	«Տեքնոլոջի Տրանսֆեր» ասոցիացիա» ՀԿ-ի խորհրդի անդամ
Մ. Աբովյան	«Տեքնոլոջի Տրանսֆեր» ասոցիացիա» ՀԿ-ի ղեկավար
Գ. Հասրաթյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն
Հ. Բաբայան	«Նեյրոն» գործարանի տնօրեն
Դ. Պետրոսյան	Հայաստանի պետական ագրարային համալսարանի պրոռեկ- տոր, գիտական կենտրոնի տնօրեն
Ֆ. Նախշբարյան	«Գոլոս Արմենիի» օրաթերթի գլխավոր խմբագիր
Մ. Հերզնյան	«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի նախագահ
Ա. Զաքարյան	«Արիակ» ՓԲԸ-ի տնօրեն
Գ. Ազիզյան	«Հայնախագիծ» ՓԲԸ-ի տնօրեն

1. Հայաստանի Հանրապետությունում սեյսմակայուն շինարարության հիմնախնդիրների մասին

(Ս. Հարությունյան, Մ. Մելքունյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ Հայաստանի Հանրապետության տարածքում նոր կառուցվող և վերականգնվող ու ուժեղացվող շենքերում շերտավոր ռետինամետաղական հենարանների օգտագործմամբ սեյսմամեկուսացման համակարգեր կիրառելու վերաբերյալ առաջարկներին.

2) ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին՝ նախապատրաստել և ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանին ներկայացնել ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանի գլխավորությամբ, «Հայնախագիծ» ՓԲԸ-ի տնօրեն Գ. Ազիզյանի, ՀՀ-ում սեյսմամեկուսացման համակարգերի ներդրման հեղինակ Մ. Մելքունյանի և մյուս շահագրգիռների մասնակցությամբ աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագիծ.

3) հանձնարարել ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանին՝

ա. ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանին ներկայացնել բոլոր այն շենքերի ցանկը, որտեղ նպատակահարմար է իրականացնել սեյսմամեկուսացման աշխատանքներ,

բ. աշխատանքային խմբում քննարկել և մշակել սեյսմամեկուսացման աշխատանքների իրականացման բիզնես-առաջարկ՝ ներառյալ տիպային նախագծերը և տեխնիկական հսկողության մեխանիզմները,

գ. համագործակցելով Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի հետ՝ մշակված աշխատանքների իրականացման ծրագիրը և բիզնես-առաջարկը տեղադրել Երևանի քաղաքապետարանի կայքում՝ մասնավոր հատվածի հետ համագործակցելու համար.

4) առաջարկել Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանին բազմաբնակարան շենքերի սեյսմիկ կայունությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել համապատասխան օրենսդրական փոփոխության փաթեթ:

2. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության մեքենայացման և մեքենաշինության հիմնախնդիրների ռազմավարական ծրագիր մշակելու մասին
-

(Ս. Հարությունյան, Դ. Պետրոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանին՝ համագործակցելով ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի պրոռեկտոր, գիտական կենտրոնի տնօրեն Դ. Պետրոսյանի հետ մշակել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել առաջարկություններ ՀՀ-ում գյուղատնտեսության մեքենայացման և մեքենաշինության հիմնախնդիրների լուծման վերաբերյալ:

3. Տեղեկատվություն՝

- 1) Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին քիմիայի զարգացման ծրագրի մշակման ընթացքի մասին

(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի զեկուցումը Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին քիմիայի զարգացման ծրագրի մշակման ընթացքի մասին.

2) հանձնարարել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին քիմիայի զարգացման ծրագրի մասնագիտական եզրակացություն:

- 2) առաջարկներ՝ «Արիակ» ՓԲԸ-ի ընդլայնման ծրագրի ֆինանսավորման հնարավորությունների մասին

(Ս. Հարությունյան, Գ. Հասրաթյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին քննարկել «Արիակ» ՓԲԸ-ին պետական երաշխիքի ներքո, ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով, վարկավորման հնարավորության հարցը և արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

4. Առաջիկա նիստի օրակարգի վերաբերյալ՝

- 1) ԴՆԹ-ի հետազոտությունների լաբորատորիայի ստեղծման ծրագիր,
- 2) Գերզգայուն չափիչ սարքերի կիրառման վրա հիմնված պաշտպանական համակարգեր («Ճշգրիտ տվիչներ/սարքավորումներ» ՄՊԸ-ի ծրագիր),
- 3) Գիտության արդյունքների առևտրայնացման կենտրոն և հիմնադրամ ստեղծելու մասին

 (Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի առաջարկին և հաջորդ նիստի օրակարգում ներառել ներկայացված հարցերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ